

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2022

02.2022

03.2022

04.2022

05.2022

06.2022

07.2022

08.2022
Օգոստոս

09.2022

10.2022

11.2022

12.2022

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 30-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2022

Օգոստոս

թիվ 8 (288)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ ՎԿ «Աբովյան» մասնաճյուղը հաշվառելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ «Զվարթնոց», «ԱԷՍ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ «Մաշտոց», «ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ «Արարատ» և «Հրազդան», ««Ջի Ընդ Էյ» ՈՒՎԿ ՍՊԸ «Հալաբյան» մասնաճյուղերը գրանցելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Արցախբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի թիվ 2, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» և «ԱՐԱՐԱՏ» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ԼՈՒՎԿ ՍՊԸ «Իջևան» մասնաճյուղը գրանցումից հանելու մասին

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 128Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 123-Ն որոշումը «2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» ոսկե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 124-Ն որոշումը «2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

18 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 125-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 300-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

19 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 127-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի ապրիլի 5-ի թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 129-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

21 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 130-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

22 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 131-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

23 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 135-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հունիսի 15-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

27 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 140-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 143-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

28 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Հաշվառվել է*** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Աբովյան» մասնաճյուղը (որոշում թիվ 139Ա):
- ***Գրանցվել են*** «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Զվարթնոց», «ԱԷՍ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Մաշտոց», «ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արարատ» և «Հրազդան», ««Ջի Ընդ Էյ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Հալաբյան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/400Ա, 1/423Ա, 1/426Ա, 1/427Ա):
- ***Թույլատրվել է*** «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության Ստեփանակերտի թիվ 2, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» և «ԱՐԱՐԱՏ» մասնաճյուղերի ***գործունեության դադարեցումը*** (որոշումներ թիվ 1/409Ա, 1/440Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ԼՈՒՎԿ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Իջևան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/414Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022 թ. օգոստոսի 2-ի թիվ 128Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 9.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 11.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 8.0%:

*2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» ոսկե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «է» կետերը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2022 թվականի նոյեմբերի 22-ից շրջանառության մեջ դնել 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» ոսկե ներդրումային դրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են սույն որոշման Հավելվածում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
29 հուլիսի 2022 թ., N 123-Ն

Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի հուլիսի 26-ի թիվ 123-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 գրամ քաշով ոսկե ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023»: Աջ կողմում տեղադրված են՝ «1g» և «Au 999.9», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. հուլիսի 26-ին (ՀՀԳՏ, 4.08. 2022):

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 999.9^0
Քաշը	1 գրամ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	16.54 ± 0.12 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 25000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 գրամ քաշով ոսկե ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





2. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ոսկե ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023»: Աջ կողմում տեղադրված են՝ «1/4 Oz» և «Au 999.9», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 999.9^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	25.20 ± 0.15 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 25000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ոսկե ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





3. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ոսկե ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «25000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023»: Աջ կողմում տեղադրված են՝ «1/2 Oz» և «Au 999.9», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	25000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 999.9^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	30.20 ± 0.20 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 25000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ոսկե ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





4. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ոսկե ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «50000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023»: Աջ կողմում տեղադրված են՝ «1 Oz» և «Au 999.9», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	50000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 999.9^0
Քաշը	1 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	38.60 ± 0,30 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 25000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ոսկե ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





*2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «է» կետերը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2022 թվականի նոյեմբերի 22-ից շրջանառության մեջ դնել 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են սույն որոշման Հավելվածում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
29 հուլիսի 2022 թ., N 124-Ն

Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի հուլիսի 26-ի
թիվ 124-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023»: Աջ կողմում տեղադրված են՝ «1/4 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. հուլիսի 26-ին (ՀՀԳՏ, 4.08. 2022):

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	20,18 +/- 0,07 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





2. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023»: Աջ կողմում տեղադրված են՝ «1/2 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	27,66 +/- 0,15 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





3. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «500 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023»: Աջ կողմում տեղադրված են՝ «1 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	38,60 +/- 0,3 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 8.000.000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





4. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023»: Աջ կողմում տեղադրված են՝ «5 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	60,15 +/- 0,5
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





5. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «5000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023»: Աջ կողմում տեղադրված են՝ «10 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	10 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	75,50 +/- 0,7
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





6. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023»: Աջ կողմում տեղադրված են՝ «1 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	100,00 +/- 0,9
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





7. 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «20000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2023», շրջանակի մեջ: Աջ կողմում տեղադրված են՝ «5 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «Գայգեր Էդելմետալե ԲԸ» («GEIGER EDELMETALLE AG») ընկերությունում:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	20 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	149,62 +/- 1,2
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 50.000 հատ

6) 2023 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները.





*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 300-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով նվազեցնելու և կանխարգելելու վճարային քարտերով իրականացվող գործառնությունների արդյունքում առաջացող ռիսկերը (օրինակ՝ հաշվարկային և արտարժութային), ինչպես նաև բարենպաստ պայմաններ ապահովելու անկանխիկ գործառնությունների զարգացման համար,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և 2-րդ մասի «ե» կետերով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «իդ» կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման կարգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հունվարի 31-ի թիվ 39-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 300-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման հետ կապված քարտապանների շահերի պաշտպանությանն ուղղված անվտանգության կանոններ սահմանելու մասին» կարգի 29-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1-րդ կետ.

«29.1 Եթե թողարկողների կողմից թողարկված վճարային քարտերի սպասարկումը (այդ թվում՝ թոքեններ կիրառող թվային վճարային լուծումների կիրառմամբ) իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի կողմից, ապա այդ գործառնությունների գծով քլիրինգը և վերջնահաշվարկն իրականացվում է բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանաբար քլիրինգ կամ վերջնահաշվարկ իրականացնելու իրավասություն ունեցող կազմակերպության կողմից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հոկտեմբերի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

29 հուլիսի 2022 թ., N 125-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. հուլիսի 26-ին (ՀՀԳՏ, 4.08. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի ապրիլի 5-ի թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «է» կետերը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի ապրիլի 5-ի «2022-2023 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Եղիշե Չարենց-125», «Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ» ոսկե և «Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ», «Օգանեսոն (Og)», «Դավիթ Բեկ», «Օհան Դուրյան-100» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու մասին» թիվ 55-Ն որոշման 3-րդ կետում «օգոստոսի 22-ից» բառերը փոխարինել «սեպտեմբերի 13-ից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան

3 օգոստոսի 2022 թ., N 127-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. օգոստոսի 2-ին (ՀՀԳՏ, 4.08. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով խթանելու ներդրումային ընկերությունների ներգրավվածությունն արտարժույթի շուկայում, ինչպես նաև հնարավորություն տալու ներդրումային ընկերություններին իրենց հաճախորդներին մատուցելու համալիր ծառայություններ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգի 84-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«84. Ներդրումային ընկերությունն Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված գործառնությունները կարող է իրականացնել միայն անկանխիկ եղանակով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան

15 օգոստոսի 2022 թ., N 129-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. օգոստոսի 9-ին (ՀՀԳՏ, 17.08. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով խթանելու Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող վերջնահաշվարկի ծառայությունների զարգացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 175-րդ հոդվածի 3-րդ մասը, 176-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ը հաստատելու մասին» թիվ 242-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ի 4-րդ կետի 6-րդ ենթակետում «վճարման արդյունավետ ապահովման» բառերից հետո լրացնել «և արտարժույթի առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան

15 օգոստոսի 2022 թ., N 130-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. օգոստոսի 9-ին (ՀՀԳՏ, 17.08. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովելու արժեթղթերով ներդրումային գործառնություններ իրականացնելու իրավասություն ունեցող ֆինանսական կազմակերպությունների մուտքը դեպի կարգավորվող շուկա,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 200-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. *Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ««Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը հաստատելու* և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու *մասին» թիվ 272-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.*

1) Կանոնակարգի 83-րդ կետում «համակարգի անդամները» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն կանոնակարգի 84.3-րդ կետով սահմանված կազմակերպությունների» բառերով,

2) *Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 84.3-րդ կետով.*

«84.3. Հաշվարկային համակարգի անդամ կարող են լինել նաև վարկային կազմակերպությունները և ապահովագրական ընկերությունները: Կենտրոնական դեպոզիտարիան վարկային կազմակերպություններին և ապահովագրական ընկերություններին շնորհում է Հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակ իր կանոններով սահմանված կարգով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան

15 օգոստոսի 2022 թ., N 131-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. օգոստոսի 9-ին (ՀՀԳՏ, 17.08. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հունիսի 15-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնելու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվությունը վերստուգելու նպատակով միջազգային ճանաչում ունեցող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կազմակերպվող հրապարակային մրցույթների անցկացման հետ կապված որոշ հարաբերություններ,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 16-րդ հոդվածը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը և 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հունիսի 15-ի ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրության համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին» կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 154-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) և որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրության համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին» կանոնակարգում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման մեջ և Կանոնակարգում «վերստուգիչ խումբ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «ներքին աուդիտի վարչություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:
2) Կանոնակարգի 1-ին կետի 2-րդ ենթակետը «երեք տարի ժամկետով» բառից առաջ լրացնել «մինչև» բառով:
3) Կանոնակարգի 2-րդ կետում «Հրապարակային մրցույթի մասնակիցներ կարող են լինել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձ հանդիսացող ցանկացած կազմակերպություններ.» բառերը փոխարինել «Հրապարակային մրցույթի մասնակիցներ կարող են լինել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. օգոստոսի 23-ին (ՀՀԳՏ, 31.08. 2022):

Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձինք:»:

4) Կանոնակարգի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հրապարակային մրցույթին մասնակցելու մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակված առաջարկը (հայտարարությունը) ուղղված է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող բոլոր կազմակերպություններին, բացառությամբ սույն կանոնակարգի 4-րդ կետում թվարկված կազմակերպությունների:»:

5) Կանոնակարգի 4-րդ կետում.

ա. «անձինք» բառը փոխարինել «կազմակերպությունները» բառով,

բ. հանել «մրցույթի հայտը ներկայացնելու պահին ունեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտքեր՝ հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների գծով» բառերը:

6) Կանոնակարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում «Լինի անկախ Կենտրոնական բանկից» բառից հետո լրացնել «, մասնավորապես՝

ա. Կենտրոնական բանկի հետ չպետք է ունենա պայմանագրային կամ այլ իրավահարաբերություններ, որոնք կասկածի տակ կարող են դնել նրա անկախությունը,

բ. որևէ կերպ ներգրավված չլինի Կենտրոնական բանկի որոշումների կայացման գործընթացում,

գ. չլինի Կենտրոնական բանկի կամ ֆինանսական համակարգի մասնակիցների և դրանց ղեկավարների հետ փոխկապակցված անձ,» բառերը:»:

7) Կանոնակարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Համապատասխանի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 16-րդ հոդվածի և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի պահանջներին,»:

8) Կանոնակարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) աուդիտի թիմում ներգրավված աշխատակիցները, աուդիտի համար պատասխանատու ղեկավարը պետք է ունենան ֆինանսական ոլորտում աշխատանքային փորձ և հաշվապահի կամ աուդիտորի միջազգային որակավորումներ:»:

9) Կանոնակարգում «աշխատակազմ» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել «քարտուղարություն» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով:

10) Կանոնակարգի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Հրապարակային մրցույթի մասնակիցների պահանջով նրանց էլեկտրոնային եղանակով տրամադրվում է սույն կանոնակարգը:»:

11) Կանոնակարգի 12-րդ կետում «երեք տարի» բառերից առաջ լրացնել «մինչև» բառը:

12) Կանոնակարգի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայությունը նախաձեռնող ստորաբաժանման կողմից պատրաստված և մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված հրապարակային մրցույթի անցկացման մասին հայտարարությունը (այսուհետ՝ հրապարակային ծանուցումը) հրապարակում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքում և www.azdarar.am կայքում՝ հրապարակային մրցույթը սկսվելուց (մրցույթի հայտերի ընդունման վերջին օրվանից) առնվազն 30 (երեսուն) օր առաջ:»:

13) Կանոնակարգի 14-րդ կետից հանել «և 57-րդ» բառերը:

14) Կանոնակարգի 14.1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

15) Կանոնակարգի 30-րդ կետը «մեթոդը):» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություններով.

«Գնային առաջարկը պետք է ներառի բոլոր տեսակի ծախսերը և հարկերը: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Այն պետք է ներկայացվի ՀՀ դրամով՝ տառերով և թվերով արտահայտված: Ինչպես նաև պետք է ներկայացվեն վճարման պայմանները (վճարումների կատարման կարգը):»:

16) Կանոնակարգի 32-րդ կետում «աուդիտի իրականացման ժամկետները,» բառերից հետո լրացնել «մրցույթի նախավճարը հավաստող փաստաթուղթ,» բառերը:

17) Կանոնակարգի 33-րդ կետում «հայտերի հետվերցման» բառերը փոխարինել «հայտերի հետ վերցնելու» բառերով:

18) Կանոնակարգի 37-րդ կետում «մեթոդը» բառից հետո լրացնել «՝ 1 տարվա, 3 տարվա համար ներկայացված առաջարկները՝ համապատասխանաբար գումար, ԱԱՀ, ընդամենը դաշտերով» բառերը:

19) Կանոնակարգի 38-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների և պատասխանատու ղեկավարի՝ ՖՄՀՍ միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող առևտրային և կենտրոնական բանկերի աուդիտի փորձի մասին տեղեկատվություն (այդ թվում միջազգային՝ ԵՄ, ԱՊՀ և այլն).»:

20) Կանոնակարգի 38-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների միջազգային որակավորման վերաբերյալ տեղեկություններ (ԷյՍիՍիԷյ (ACCA), ՍիՊիԷյ (CPA), ՍիԱյԷսԷյ (CISA), այլն).»:

21) Կանոնակարգի 38-րդ կետի 7-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

22) Կանոնակարգի 42-րդ կետը «ուղարկել պատվիրված նամակով:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Մրցույթի հայտերի ստացման ամսաթիվ է համարվում պատվիրված նամակի՝ Կենտրոնական բանկի կողմից ստացման ամսաթիվը:»:

23) Կանոնակարգի 43-րդ կետում.

ա. «մրցույթի տեխնիկական առաջարկ» բառերից հետո հանել «երկրորդ» բառը,

բ. «մրցույթի գնային առաջարկ» բառերից հետո հանել «առաջին» բառը:

24) Կանոնակարգի 44-րդ կետի 2-րդ ենթակետում «հաշվապահական հաշվառման» բառերը փոխարինել «ֆինանսական» բառով:

25) Կանոնակարգի 45-րդ կետում.

ա. «երկրորդ ծրարը» բառերը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել ««մրցույթի տեխնիկական առաջարկ» ծրարը» բառերով և դրա համապատասխան հոլովաձևերով,

բ. «ներկայացվող տեղեկությունները» բառերը փոխարինել «ներկայացրած տեղեկությունները» բառերով:

26) Կանոնակարգի 46-րդ կետում «անունը (անվանումը)» բառերը փոխարինել «անվանումը» բառով:
27) Կանոնակարգի 47-րդ կետի 4-րդ ենթակետում «(հաղթողների) անունը» բառերը փոխարինել «անվանումը» բառով:
28) Կանոնակարգի 49-րդ կետից հանել «կարող է ստորագրվել հեռատիպային (ֆաքսիմիլային) կապի միջոցներով փաստաթղթեր (պայմանագրերը) փոխանակելու միջոցով և» բառերը:
29) Կանոնակարգի 50-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
30) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 60-րդ կետով.

«60. Հրապարակային մրցույթին հայտեր չներկայացնելու կամ ներկայացված մրցութային հայտերը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մրցույթի չափանիշները և պահանջները չբավարարելու պատճառով մրցույթը չկայացված համարվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության վերստուգման նպատակով աուդիտորական ծառայության ձեռքբերումը կարող է իրականացվել մեկ անձից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը ներկայացված հայտերի վրա:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
29 օգոստոսի 2022 թ., N 135-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 143-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 35.1 հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի «Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վարման կարգը, ներառման ենթակա տեղեկությունների ցանկը, տեղեկությունների (հաշվետվությունների) տրամադրման ձևը և ժամկետները սահմանելու մասին» թիվ 143-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված «Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վարման կարգը, ներառման ենթակա տեղեկությունների ցանկը և տեղեկությունների (հաշվետվությունների) ներկայացման ժամկետները» հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 8-րդ կետի 4-րդ ենթակետում «մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

29 օգոստոսի 2022 թ., N 140-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. օգոստոսի 23-ին (ՀՀԳՏ, 31.08. 2022):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՕԳՈՍՏՈՍ 2022)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 32
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 36
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ համախառն արտաքին պարտք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 56
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 57
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 67
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ-ի կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 88
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
